ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«17» 05 2023 թ.
№ ԿԱՆՊ/2-636

«Արմեն Սամվելի Գևորգյան» ԱՁ -ին
ՀՎՀՀ 43119505
ՀՀ, ք. Երևան, Օգանովի փ., 15շ.,բն. 10
հեռ. 095866600

ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Սամվելի Գևորգյան» ԱՁ-ի միջև 31.01.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-12/1-2 (համաձայնագիր N1 առ 24.02.2023թ.) գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Արմեն Սամվելի Գևորգյան» ԱՁ-ն մատակարարման ենթակա 46 հատ «ծաղկեպսակ մեծ» ապրանքատեսակի մատակարարման ժամկետը էականորեն խախտել է և սահմանված ժամկետում չի իրականացրել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. մայիսի 17-ին** միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքի քանակի մասով:

Տեղեկացնում ենք, որ «Արմեն Սամվելի Գևորգյան» ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **918** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **199 500** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **275 310** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. մայիսի 27-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 199 500 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 275 310 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Արմեն Սամվելի Գևորգյան» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. մայիսի 27-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ